ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի եւ խաղաղության օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ:

Մայիսի 9-ը հայ ժողովրդի պատմության մեջ յուրահատուկ օր է, որը խաղաղ ապրելու եւ արարելու, ինքնության ու հարատեւության համար պայքարող հաղթանակների խորհրդանիշն է:

Հայրենական մեծ պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը գիտակցաբար մասնակցեց չարիքի դեմ պայքարին: Հայ զինվորներն անցան Երկրորդ աշխարհամարտի թոհուբոհով եւ իրենց ներդրումն ունեցան նացիզմի ջախջախման գործում: Մերօրյա պատմության մեջ այդ հաղթանակների պսակը Շուշիի գրավումն ու Արցախի ազատագրումն էր:

Ամեն տարի այս հրաշալի օրը համայն հայությունը համակվում է միասնության ու համախմբվածության, ազգային ոգու եւ արժանապատվության նվիրական զգացումներով, որոնց շնորհիվ ձեռք են բերվել մեր բոլոր բախտորոշ հաջողություններն ու նվաճումները:

Այսօր, երբ կրկին անհանգիստ են մեր երկրի սահմանները, պետք է ճիշտ գնահատենք եւ ներկայի իրողությունների ու մարտահրավերների տեսանկյունից իմաստավորենք մեր պատմական հաղթանակները՝ Ավարայրից մինչև Շուշի, գլուխ խոնարհենք բազմահազար այն քաջորդիների հիշատակի առջև, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին ազգի ու հայրենիքի փրկության համար, հանուն ազատ և անկախ երկրում արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքի:

Շնորհավորելով Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ, մաղթում եմ բոլորիս քաջառողջություն, խաղաղաղություն, ոգու ամրություն, հաղթանակներ եւ ստեղծագործ աշխատանք՝ հանուն համազգային նպատակների իրականացման: